**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» Օգոստոսի 2019թ.-ի N 22-Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ կետի համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գեղարքունիք համայնքի կուլտուրայի տան 2-րդ հարկի մի հատվածի վերափոխումը մանկապարտեզի (2-րդ փուլ) նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, կառուցման, տեխ. հսկողության և հեղինակային հսկողության աշխատանքների ծախսերի ֆինանսավորումը կատարելու համար համայնքի 2019թ,-ի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

   ա. 2019թ.-ի բյուջեի եկամտային մասի ֆիզիկական անձանց նվիրաբերությունից համայնքին դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերը՝ տող 1371 սահմանել 1300,0 հազար դրամ

   բ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարված հատկացումը ֆոնդային բյուջեին պակասեցնել 1300,0 հազար դրամով:

   գ. Կատարել հատկացում վարչական բյուջեի եկամտային մասից՝ տող 1371, ֆոնդային բյուջեին 1300,0 հազար դրամ:

2. Գեղարքունիք համայնքի կուլտուրայի տան հրապարակում ցայտաղբյուրի կառուցման, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ծախսերի ֆինանսավորման համար կատարել հետևյալ փոփոխությունները

   ա. 2019թ.-ի բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում ֆոնդային բյուջեին 543,0 հազար դրամով:

   բ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի1 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5134 հոդվածը ավելացնել 20,0 հազար դրամով, 5112 հոդվածը 523,0 հազար դրամով, այդ թվում՝ շինարարական աշխատանքների համար 510,0 հազար դրամ, տեխ. Հսկողությանը 10,0 հազար դրամ, հեղինակային հսկողություն 3,0 հազար դրամ:

3. Գեղարքունիք համայնքի ծառայողական ավտոմեքենայի գնահատման և հեռուստաեթերում հայտարարությունների հրապարակման ծախսերի ֆինանասավորման համար բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

   ա. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի1 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածը պակասեցնել 48,8 հազար դրամով, այն ավելացնելով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի1 դասի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածին 20.0 հազար դրամ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի1 դասի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածին 28,8 հազար դրամ:

Ավագանու անդամներ՝ Ասատրյան Վանիկ Ն.

Գրիգորյան Գագիկ Ռ.

Կարապետյան Զավեն Ա.

Միրիբյան Մարտին Ռ.

Ումրշատյան Միեր Մ.

**Գեղարքունիքի համայնքի ղեկավար՝** **Կ. Ասատրյան**

Կ.Տ